ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/04

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Մասնակից՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ՝ Ք. Մայիլյանի,
«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.01.2021թ.-ի թիվ 26/26-1/123-2021 գրությամբ «Սիսիանի հաց»

ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 30.12.2020թ. ՍՄ//69340-2020 գրության հիման վրա, 12.01.2021թ.-ին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 12.01.2021թ.-ին:

12.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ (ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/04 համարի ծածկագիրը:

21.01.2021թ.-ին, 03.02.2021թ.-ին և 11.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2021թ.-ին:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 30.12.2020թ. ՍՄ//69340-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իր ենթակայությանը հանձնված «Երևանի N1 տուն-ինտերնատ» պետական ոչ

առևտրային կազմակերպության 2021 թվականի կարիքների բավարարման նպատակով ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ ծածկագրով կենտրոնացված կարգով կազմակերպ-ված սննդամթերքի գնման ընթացակարգի շրջանակներում հայտ էր ներկայացրել նաև «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, որը հետագայում բանավոր հրաժարվել է պայմանագիր կնքելուց և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում իր կողմից կնքված և ստորագրված պայմանագիրը չի ներկայացրել պատվիրատուին:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԽՍ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

27.01.2021թ.-ին ներկայացված թիվ ՍՄ//3044-2021 գրությամբ Պատվիրատուն հայտնել է նաև հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԽՍ-ՍՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ՝ ընթացակարգ/ մասնակցության հայտ էր ներկայացրել նաև «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն: 14.12.2020թ. տեղի ունեցած գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքում «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, սահմանվել է անգործության ժամկետ, որի ավարտից հետո վերոնշյալ չափաբաժնի մասով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել: Պայամանագրի նախագիծը «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին ուղարկվել է 16.12.2020թ.և պայմանագրի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 30.12.2020թ.:

Ընթացակարգի շրջանակներում կազմակերպված գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների ընթացքում «Սիսիանի հաց» ՍՊԸ ներկայացուցիչը հայտնել էր, որ ընթացակարգի 34-րդ չափաբաժնի համար սխալ գնային առաջարկ են ներկայացրել և ընկերությունը ցանկանում է հրաժարվել տվյալ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց: «Սիսիանի հաց» ՍՊԸ ներկայացուցչին պարզաբանվեց, որ պայմանագիր կնքելուց մասնակցի հրաժարվելու դեպքում պատվիրատուն պարտավոր է նախաձեռնել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց: Հարկ է նշել, որ նույն

ժամանակահատվածում «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցելով այլ ընթացակարգերի կնքվելիք պայմանագրերի նախագծերը ներկայացրել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ առձեռն ներկայացնելով նախարարություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հեռախոսակապի միջոցով բազմիցս հիշեցրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ ներկայացուցչին կնքված և ստորագրված պայմանագրի երկու բնօրինակները մինչև 30.12.2020թ. ներկայացնելու անհրաժեշտության մասին, շեշտելով նաև, որ հիշյալ պայմանագրի ստորագրումը մինչև 01.01.2021թ. խիստ կարևոր է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում խնամվողների կարիքների ամբողջական բավարարումն ապահովելու նպատակով: Սակայն «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից որևէ անգամ չի նշվել, որ իրենց կողմից ստորագրված և կնքված պայմանագրերը կներկայացվեն փոստային առաքանու միջոցով և ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով նաև այն, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն չէր ցանկանում կնքել վերոնշյալ պայմանագիրը, որոշում կայացրեց «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին ընթացակարագի 34-րդ չափաբաժնի մասով զրկել պայմանագիրը կնքելու իրավունքից և նախաձեռնել վերջինիս գնումների գործընթաց մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացին:

11.01.2021թ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտողարը փոստի միջոցով ստացավ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի երկու բնօրինակ: Ընդ որում ծրարի եփնամասում (կցվում է) դրված էր «Հայփոստ» ՓԲԸ կնիքը, որի վրա նշված էր՝ 05.01.2021 ամսաթիվը: Այն մասին, որ ծրարը ուղարկված է եղել 30.12.2020 թվականին, օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանմամբ, պատվիրատուն տեղեկացել է էլ. փոստի միջոցով, գնումների հետ կապված բողոքներ քննող անձից ստացված ծանուցումից:

Հաշվի առնելով վերոգրյալը հայտնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարությունը պատրաստակամ է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի համապատասխան որոշման հիման վրա վերացնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին պայմանագրի կնքելու իրավունքից զրկելու որոշումը և վերջինիս հետ ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով կնքել պայամանգիր:»:

3. <u>«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.01.2021թ.-ի թիվ 26/26-1/123-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն Ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 16.12.2020թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 30.12.2020թ. ներառյալ (արտապտումը կցվում է):

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 30.12.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 34-րդ չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված>>:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և Ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին առաջարկ ներկայացնել 34-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 34-րդ

չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

1.Այսպիսով, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (16.12.2020թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (17.12.2020թ.-մինչև 30.12.2020թ. ներառյալ), այն է՝ 30.12.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 34-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել /տես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն/:

Հատկանշական է, որ նշված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

30.12.2020թ. <<ՀԱՅՓՈՍՏԻ>> ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված>>: Իսկ ինչպես արդեն նշել ենք, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և

պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 30.12.2020թ. <<ՀԱՅՓՈՍՏԻ>> ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:

Ի հավաստումն վերոհիշյալ փաստի՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք հարցում անել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ 30.12.2020թ. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից փոստային առաքման միջոցով ուղարկված համապատասխան պայմանագիրը և պայմանագրի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը) նախարարության կողմից ստանալու փաստը հաստատելու համար:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պայմանագրի կնքումից հրաժարում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը 03.02.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

««Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2021/04 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և Ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 16.12.2020թ. (անգործության ժամանակահատվածում), համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 30.12.2020թ. ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 34-րդ չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել/:

Ուսումնասիրելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Ընթացակարգի վերաբերյալ ներկայացված դիրքորոշմամբ բերված փաստարկները, հայտնում ենք հետևյալը, մասնավորապես՝

1.«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն Ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է սխալ գնային առաջարկ.

2. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն հրաժարվել է տվյալ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց.

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հեռախոսակապի միջոցով բազմիցս հիշեցրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացուցչին կնքված և ստորագրված պայմանագրի երկու օրինակը մինչև 30.12.2020թ. ներկայացնելու անհրաժեշտության մասին:

4. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ. ՀԱՅՓՈՍ ՓԲԸ-ի միջոցով ուղարկված փաթեթում առկա են կնքված պայմանագրի ստորագրված և կնքված երկու բնօրինակ:

Եվ այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ-ցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված>>:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքների վրա (ըստ Պատվիրատուի հայտնած դիրքորոշման).

1.«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն Ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է սխալ գնային առաջարկ.

2. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն հրաժարվել է տվյալ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց.

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հեռախոսակապի միջոցով բազմիցս հիշեցրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացուցչին կնքված և ստորագրված պայմանագրի երկու օրինակը մինչև 30.12.2020թ. ներկայացնելու անհրաժեշտության մասին:

1, 2 և 3 կետերի վերաբերյալ հայտնում ենք, որ եթե «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից սխալ գնային առաջարկ ներկայացնելու պարագայում՝ գնահատող հանձնաժողովը պարտավոր էր ուղղակի մերժեր ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ սխալ, Ընթացակարգ հրավերին չհապատասխանող գնային առաջարկը ենթակա է մերժման:

Իսկ եթե փորձ է արվում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մոլորեցնել այն պատճառաբանությամբ, թե իբր ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է սխալ /մեր կարծիքով սխալ՝ նկատի ունեն անհամեմատ ցածր գնային առաջարկ/, ապա գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կարող է ուսումնասիրել բոլոր գնային առաջարկները և տեսնել, որ վերջին տարիների համեմատ ներկայացվել անհամեմատ բարձր գնային առաջարկ: Ավելին, երբևէ ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, որի պարագայում նույնպես իրականությանը համապատասխանելու դեպքում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր ուղղակի մերժեր ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, իսկ այն, թե իբր

բազմիցս Պատվիրատուն հիշեցրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացուցչին կնքված և ստորագրված պայմանագրի երկու օրինակը մինչև 30.12.2020թ. ներկայացնելու անհրաժեշտության մասին, ապա դա դուրս է «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության դրույթների իրավաչափությունից, այն պարզ պատճառով, որ ՍՊԸ-ն է որոշում պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (16.12.2020թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ կոնկրետ որերորդ օրը ներկայացնել կնքված և ստորագրված պայմանագիրը՝ օրինակ ութերորդ, թե տասերորդ:

Հատկանշական է նաև այն, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելուց զրկելու որոշումը եղել է հենց 30.12.2020թ. և նույն օրն էլ համապատասխան հիմքերն ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառելու համար: Մինչդեռ 2020թ. դեկտեմբերի 30-ը ամբողջությամբ դեռևս հանդիսանում էր պայմանագրի նախագիծը կնքելու, ստորագրելու և համապատասխան փաստաթղթերով հանդերձ Պատվիրատուին ներկայացնելու համար նախատեսված 10-րդ աշխատանքային օրը /պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 16.12.2020թ., համապատասխանաբար վերջնաժամկետ էր սահմանվել 30.12.2020թ. ներառյալ/ և Պատվիրատուն չսպասելով մինչև դեկտեմբերի 30-ի օրվա լրանալուն՝ որոշում է կայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին զրկել պայամանագիր կնքելու իրավունքից:

4. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ. <<ՀԱՅՓՈՍՏ>> ՓԲԸ-ի միջոցով ուղարկված փաթեթում առկա են կնքված պայմանագրի ստորագրված և կնքված երկու բնօրինակ:

Այս մասով հայտնում ենք, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (16.12.2020թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (17.12.2020թ.-մինչև 30.12.2020թ. ներառյալ), այն է՝ 30.12.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 34-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված

ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել /տես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն/:

Հատկանշական է, որ ի պատասխան գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հարցման՝ գնահատող հանձնաժողովը հաստատել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ. <<ՀԱՅՓՈՍՏ>> ՓԲԸ-ի միջոցով ուղարկված փաթեթում առկա են կնքված պայմանագրի ստորագրված և կնքված երկու բնօրինակները՝ ինչն էլ պահանջվում էր անել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 30.12.2020թ. <<ՀԱՅՓՈՍՏ>> ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել պահանջվող փաստաթղթերը:»:

4. <u>ՍՅ-LO-2021/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 05.11.2020թ.-ին հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

iii. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգից գնմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.12.2020թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը

որոշել է 34-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին:

v. 14.12.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել 5 օր՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

vi. Պատվիրատուն 16.12.2020թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացնելով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ առաջարկել է հրավերով սահմանված ժամկետներում ներկայացնել պայմանագրի՝ Մասնակցի կողմից ստորագրված օրինակները:

vii. Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 880, կոդը՝ RR159390825AM/ համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 30.12.2020թ.-ին պատվիրված նամակով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղարկել է առաքանի:

viii. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 880, կոդը՝ RR159390825AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 11.01.2021թ.-ին:

ix. 27.01.2021թ.-ին ներկայացված թիվ ՍՄ//3044-2021 գրությամբ Պատվիրատուն հավաստել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը փոստի միջոցով 11.01.2021թ.-ին ստացել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի երկու բնօրինակ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.01.2021թ.-ի թիվ 26/26-1/123-2021 գրությամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ նեթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա

ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 05.11.2020թ.-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2020թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության հիման վրա «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 34-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: 14.12.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել 5 օր՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները: Պատվիրատուն 16.12.2020թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացնելով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ առաջարկել է հրավերով սահմանված ժամկետներում ներկայացնել Մասնակցի կողմից ստորագրված պայմանագրի օրինակները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 30.12.2020թ. ՍՄ//69340-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն բանավոր հրաժարվել է պայմանագիր կնքելուց և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում իր կողմից կնքված և ստորագրված պայմանագիրը չի ներկայացրել պատվիրատուին:

Գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 880, կոդը RR159390825AM/ համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 30.12.2020թ.-ին պատվիրված նամակով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղարկել է առաքանի:

www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 880, կոդը RR159390825AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 11.01.2021թ.-ին:

27.01.2021թ.-ին ներկայացված թիվ ՍՄ//3044-2021 գրությամբ Պատվիրատուն հավաստել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտողարը փոստի միջոցով 11.01.2021թ.-ին ստացել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի երկու բնօրինակ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 16.12.2020թ.-ին, էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 30.12.2020թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ընդ որում, հարկ է նկատել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Կարգի 45-րդ կետի հիմքով ՀՀ ֆինանսների նախարարությանն է դիմել 30.12.2020թ.-ին թիվ ՍՄ//69340-2020 գրությամբ, այն դեպքում, երբ 27.01.2021թ.-ին ներկայացված թիվ ՍՄ//3044-2021 գրությամբ Պատվիրատուն հավաստել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը փոստի միջոցով 11.01.2021թ.-ին ստացել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի երկու բնօրինակ:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում 11.01.2021թ.-ին ստանալով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի երկու բնօրինակը կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և պայմանագիրը կնքված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և

պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 30.12.2020թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիրը, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.01.2021թ.-ի թիվ 26/26-1/123-2021 գրությամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/04 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**